

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ԱՐՁՆԻ ԱՌՈՂՋԱՐԱՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«Հաստատում եմ»

«Արզնի առողջարան» ՓԲԸ-ի
գործադիր տնօրեն՝ Ա. Մահտեսյան



06 2021թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԶՆԻ ԱԾԽԱԹԹՎԱՅԻՆ ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ
ԹԻՎ 1/62 ԵՎ 6/64 ՀՈՐԱՏԱՆՑՔԵՐԻՑ ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԻ ԱՐԴՑՈՒՆԱՀԱՆՄԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

ք. Երևան
2021թ.


ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ -----	4
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ -----	6
1.1. Նախատեսվող գործունեության համառոտ նկարագրությունը -----	6
1.2. Նախագծմամ նորմատիվ-իրավական հենքը -----	9
2. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ -----	13
3. ՇՐՋԱՆԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ -----	18
4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ -----	40
5. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ -----	43
5.1. Ընդհանուր բնույթի միջոցառումներ -----	43
5.2. Շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված միջոցառումների ծրագիր -----	44
5.3. Հիդրոերկրաբանական մշտադիտարկումների (մոնիտորինգի) իրականացման պլան -----	47
5.4. Սանիտարական պահպանության գոտի -----	49
6. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ -----	52
ՏԵՂԵԿԱՆՔ ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԻ ԿՈՆԴԻՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ -----	55
ԱՐՋՆԻ ԱԾԽԱԹՎԱՅԻՆ ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ԹԻՎ 1/62 ԵՎ 6/64 ՀՈՐԱՏԱՆՑՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ, Մասշտաբ 1:50000 -----	56
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ -----	57
«ԱՐՋՆԻ ԱՌՈՂՋԱՐԱՆ» ՓԲԸ ՍԽԵՄԱ, Մասշտաբ 1:1000 -----	60

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱԿՆԱՐԿԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ

Մասշտաբ 1 : 300 000



ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Օգտակար հանածո՝ ընդերքում պարփակված պինդ հանքային գոյացումներ, հեղուկ կամ գազային բաղադրամասեր, այդ թվում՝ ստորերկրյա ջրեր (քաղցրահամ և հանքային) և երկրաջերմային էներգիա, ջրավազանների, ջրհոսքերի հատակային նստվածքներ, որոնց քիմիական կազմը և ֆիզիկական հատկանիշները թույլ են տալիս դրանք օգտագործել ուղղակիորեն կամ վերամշակումից հետո

Օգտակար հանածոյի պաշարներ՝ օգտակար հանածոյի կուտակումներ, որոնց ծավալը, քանակը, որակը և տարածքային դիրքն ու ձևը որոշված են

Հանքավայր՝ ընդերքի մաս, որը պարունակում է օգտակար հանածոյի պաշարներ (այդ թվում՝ կանխատեսումային), որոնք ստացել են երկրաբանատնտեսագիտական գնահատական

Ջրերի պահպանում՝ ջրերի աղտոտումը և հյուծումը կանխարգելող ու վերացնող միջոցառումներ

Մանիտարական պահպանման գոտի՝ բնակչության՝ խմելու, առողջապահական, կոմունալ, կենցաղային սպասարկման, բուժիչ, կուրորտային և առողջարարական կարիքների պահանջների բավարարման նպատակով օգտագործվող ջրային ռեսուրսների պահպանման գոտի

Ստորերկրյա ջրեր՝ ջուր (արտեզյան, գրունտային, բնաղբյուր), որը գտնվում է երկրակեղևը կազմող ապարների մեջ հեղուկ կամ գոլորշի կամ կարծր վիճակում

Ստորերկրյա քաղցրահամ ջրեր՝ մինչև 1գ/լ հանքայնացմամբ ջրեր

Ստորերկրյա հանքային ջրեր՝ բարձր հանքայնացմամբ (1գ/լ-ից ավելի) ջրեր, որոնք պարունակում են առանձնահատուկ միկրոբաղադրիչներ: Հանքային ջրերը գլխավորապես օգտագործվում են առողջարանային բուժման համար և որպես սեղանի զովացուցիչ ջրեր

Ռեկուլտիվացիոն աշխատանքներ՝ օգտակար հանածոների արդյունահանման նախագծով կամ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական

ուսումնասիրության ծրագրով շրջակա միջավայրի պահպանության նպատակով նախատեսված ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի վերականգնմանն ուղղված (անվտանգ կամ օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումներ

Ազդակիր համայնք՝ շրջակա միջավայրի վրա հիմնադրությային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք

Շրջակա միջավայր՝ բնական և մարդածին տարրերի (մթնոլորտային օդ, ջրեր, հողեր, ընդերք, լանդշաֆտ, կենդանական ու բուսական աշխարհ, ներառյալ՝ անտառ, բնության հատուկ պահպանվող տարածքներ, բնակավայրերի կանաչ տարածքներ, կառույցներ, պատմության և մշակույթի հուշարձաններ) և սոցիալական միջավայրի (մարդու առողջության և անվտանգության), գործոնների, նյութերի, երևույթների ու գործընթացների ամբողջությունը և դրանց փոխազդեցությունը միմյանց ու մարդկանց միջև

Շրջակա միջավայրի վրա ազդեցություն՝ հիմնադրությային փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա հնարավոր փոփոխությունները

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատական՝ երկրաբանական ուսումնասիրությունների և օգտակար հանձոնների արդյունաձևման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների բացահայտում և գնահատում

Կարմիր գիրք՝ հազվագյուտ և ոչնչացման վտանգի տակ գտնվող կենդանիների, բոլոյների և սնկերի լրացման, խմբագրման ենթակա ցուցակ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. Նախատեսվող գործունեության համառոտ նկարագրությունը

Արգնի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի Արովյանի տարածաշրջանի Արգնիի առողջարանի տարածքում Երևանից 24 կմ դեպի հյուսիս, Հրազդան գետի գեղադեսիլ կիրճում, գետի ձախ ափին:

Ներկայումս «Արգնի առողջարան» ՓԲ ընկերությունը ՀՀ Կոտայքի մարզի Արգնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 1/62 և 6/64 հորատանցքերից կատարում է հանքային ջրի արդյունահանում (հանքային ջրի օգտագործում բուժական նպատակով և ըմպելասրահում խմելու համար)՝ համաձայն 20.10.2012թ. ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության տրամադրած արդյունահանման թույլտվության՝ ՇԱԹՎ-29/147 և ընդերքօգտագործման պայմանագրի՝ ՊՎ-147:

«Արգնի առողջարան» ՓԲ ընկերության տրամադրված հանքային ջրի ջրաքանակը կազմում է՝ 30000.0 մ³/տարի կամ 0.95 լ/վրկ (10000.0 մ³/տարի կամ 0.32լ/վրկ թիվ 1/62 հորատանցքից՝ բուժական նպատակով և 20000.0 մ³/տարի կամ 0.63լ/վրկ թիվ 6/64 հորատանցքից՝ ըմպելասրահի համար):

«Արգնի առողջարան» ՓԲ ընկերության կողմից պահանջվող հանքային ջրի ջրաքանակը մնում է անփոփոխ:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ «Արգնի առողջարան» ՓԲԸ (այսուհետ՝ ընկերություն) սահմանված կարգով դիմել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ ՀՀ Կոտայքի մարզի Արգնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 1/62 և 6/64 հորատանցքերի, որոնցով հաշվարկվել և հաստատվել են հանքային ջրի և ածխաթթու գազի պաշարները, արդյունահանման թույլտվության գործողության ժամկետը 20 տարով երկարաձգելու համար:

Թիվ 6/64 հորատանցքից հանքային ջրի արդյունահանման թույլտվություն է տրամադրված նաև (0.5լ/վրկ կամ 15768.0մ³/տարի ջրաքանակի) «ՄՎ ԶՈՒՐ» ՍՊ ընկերությանը՝ արդյունաբերական (շշալցման) նպատակով:

Ընկերությունը հանքային ջուրը բուժական նպատակով և ըմպելասրահում խմելու համար օգտագործում է հանքավայրի տարածքում գտնվող, ընկերության սեփականությունը հանդիսացող առողջարանային համալիրում:

Այն գտնվում է հորատանցքերից մոտ 640.0 մ հեռավորության վրա (տես նկար 1):

Ընկերությունն օգտվելու է գոյություն ունեցող ավտոճանապարհից և ենթակառուցվածքներից՝ գազատար, ջրատար, էլեկտրահաղորդման գծեր և կոյուղագծեր, այլ օժանդակ շինություններ չեն նախատեսվում:

Ընկերությունը երկարաձգելով հանքավայրի թիվ 1/62 և 6/64 հորատանցքերի արդյունահանման իրավունքն և իրականացնելով այն կշարունակի ապահովել բուժման կարիք ունեցողների ավելացող պահանջարկը, կպահպանի գոյություն ունեցող աշխատատեղերը՝ նպաստելով Արգնի համայնքի բնակչության սոցիալական պայմանների և կենսամակարդակի բարելավմանը:

Առողջարանային համալիրի նոր մասնաշենքի կառուցման, հնի վերանորոգման, ժամանակակից սարքավորումների, տեխնիկայի, կահույքի ձեռքբերման և այլ աշխատանքների իրականացման համար ընկերության կողմից մինչօրս կատարվել է մոտ 4.3 մլն. ամերիկյան դոլարի ներդրում:

Առողջարանային համալիրում բուժում են ստանում ինչպես Հայաստանի, այնպես էլ օտարերկրյա քաղաքացիները::

Դեռևս ԽՍՀՄ տարիներին այն միութենական նշանակության հանգստավայր էր, ուր բուժման նպատակով այցելում էին ամենատարբեր երկրներից:

Հանքային ջրի հանքավայրի արդյունավետ շահագործման համար ընկերությունը համալրված է բազմափորձ մասնագետներով:

Առողջարանային համալիրի հողամասի տարածքի մարերեսի չափսը կազմում է 1.4 հեկտար, որի վրա կան 8399.8 մ² ընդհանուր մակերեսով շինություններ:

Առողջարանային համալիրի տարածքի հողի նպատակային նշանակությունը՝ հատուկ պահպանվող տարածքների է, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ առողջարարական նպատակներով նախատեսված: (տես՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ՀՀ վկայականը):



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- | | |
|--|---|
| ① Արգնի առողջարան | ⑤ հանքային ջրի 2"-ոց առանձնացված խողովակ դեպի ՄՎ ՋՈՒՐ ՄՊԸ |
| ② Շշալցման արտադրամաս | ⑥ հանքային ջրի 2"-ոց առաջնային խողովակ դեպի Արգնի առողջարան |
| ③ Ըմպելասրահ | |
| ④ հանքային ջրի 2"-ոց առաջնային խողովակ դեպի ըմպելասրահ | |

1.2. Նախագծման նորմատիվ-իրավական հիմքերը

Շրջակա միջավայրը մարդու բնակության և արտադրական գործունեության միջավայրն է, որը պահպանության և իր վրա ազդեցության գնահատման կարիքն ունի:

Շրջակա միջավայրի համար անվտանգ և սոցիալապես ընդունելի Արգնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի նախնական գնահատման հայտը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են հետևյալ իրավական ակտերում.

1. 2011թ. նոյեմբերի 28-ին ընդունված ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք, որով սահմանվում են ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները: ՀՀ Ջրային օրենսգիրք, որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:
2. ՀՀ Ջրային օրենսգիրք (ընդունված 04.06.2002), որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:
3. ՀՀ Հողային օրենսգիրք (Ընդունված է 2001 թվականի մայիսի 2-ին), որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության

համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

4. ՀՀ Անտառային օրենսգիրք /24.10.2005թ./ , որը կարգավորում է ՀՀ անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները:
5. «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ընդունված 23.11.1999 թ.), որը սահմանում է պետական քաղաքանությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:
6. «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ընդունված 03.04.2000թ.), որը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների Հայաստանի Հանրապետությունում պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքանությունը:
7. «Մթնոլորտային օդի պահպանության մասին» /1994թ./ ՀՀ օրենք, որի առարկան մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների կարգավորումն է:
8. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենք» /2014թ./, որը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները:
9. ՀՀ կառավարության 5 հոկտեմբերի 2017 թվականի N 1267-Ն որոշում, որը կիրառվում է բնօգտագործման վճար վճարող ջրօգտագործողների կողմից

ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանված պաշարների և արտադրված ածխաթթու գազի հաշվառման նպատակով ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքերի, գազաչափերի տեղադրման և կնքման, ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանված պաշարների և արտադրված ածխաթթու գազի ծավալների վերաբերյալ տվյալների արձանագրման կարգերը և ժամկետները սահմանելու ժամանակ:

10. ՀՀ կառավարության 22 նոյեմբերի 2012 թվականի N 1484-Ն որոշում, որը սահմանում է ստորերկրյա հանքային ջրերի հանքավայրերի շահագործման ժամանակ անհրաժեշտ ռեժիմային դիտարկումների իրականացումը, որը կապահովի ջրային ռեսուրսները սպառումից և աղտոտումից պահպանելը:
11. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (27.11.2006թ.):
12. ՀՀ կառավարության 29 հունվարի 2010 թվականի N 71-Ն որոշում:
13. ՀՀ կառավարության 29 հունվարի 2010 թվականի N 72-Ն որոշում:
14. ՀՀ կառավարության 14 օգոստոսի 2008 թվականի N 967-Ն որոշում:
15. ՀՀ կառավարության 22 նոյեմբերի 2012թ. 1480-Ն որոշում:
16. Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N 191-Ն որոշում:
17. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշում:
18. ՀՀ կառավարության 2002 թվականի մայիսի 11-ի N 920-Ն որոշում:
19. ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 23-ի N 190-Ն որոշում:

20. ՀՀ կառավարության 14.08.2008 թվականի «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում:
21. ՀՀ կառավարության 2003 թվականի օգոստոսի 14-ի N 1110-Ն որոշում:
22. ՀՀ կառավարության 2015 թվականի մայիսի 27-ի N764-Ն որոշում:
23. ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 91-Ն որոշում:
24. ՀՀ կառավարության 2007 թվականի հունվարի 18-ի N 205-Ն որոշումը,

2. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Արգնի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի Արովյանի տարածաշրջանի Արգնիի առողջարանի տարածքում Երևանից 24 կմ դեպի հյուսիս, Հրազդան գետի գեղադեսիլ կիրճում, գետի ձախ ափին:

Կոտայքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական մասում, ծովի մակերեսույթից մոտ 900 - 2500մ բարձրության վրա: Տարածքն ընդգրկում է Հրազդան գետի վերին և միջին ավազանն ու Մարմարիկ գետի ավազանն ամբողջությամբ: Հյուսիսից սահմանափակվում է Գուրանասար, իսկ հյուսիս-արևելքից՝ Հատիսի լեռնազանգվածներով: Հարավ-արևմուտքում աստիճանաբար ցածրանալով՝ ձուլվում է Արարատյան դաշտին:

Մարզի տարածքով են անցնում Երևան-Շոթա և Հրազդան-Իջևան երկաթուղիները:

Մարզի բնակչության ճնշող մեծամասնությունը՝ հայեր են: Ապրում են նաև ռուսներ, եզդիներ, ասորիներ, քրդեր, ուկրաինացիներ և այլ ազգիներ:

Համայնքների թիվը՝ 67, որից քաղաքային՝ 7, գյուղական՝ 60:

Սահմանակից է Տավուշի, Գեղարքունիքի, Լոռու, Արարատի, Արագածոտնի մարզերին եւ մայրաքաղաք Երևանին:

Կոտայքի մարզի տնտեսության գերակա ճյուղերը երկուսն են՝ արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը:

Արդյունաբերության արտադրանքը ծավալով երկու անգամ գերազանցում է գյուղատնտեսությանը: Արդյունաբերական արտադրանքի ծավալով երկրորդն է (Սյունիքի մարզից հետո): Մարզը բացառիկ դեր ունի հատկապես էլեկտրաէներգետիկայի բնագավառում: Այստեղ են գտնվում Սևան-Հրազդան կասկադի վեց կայաններից երեքը և Հրազդանի՝ հանրապետության խոշորագույն ջերմաէլեկտրակայանը: Այստեղից են սկսվում հանրապետության բարձր լարման գլխավոր էլեկտրահաղորդման գծերը և էլեկտրաէներգիան փոխանցվում է հանրապետության տարածքով մեկ:

Արդյունաբերության առաջատար ճյուղերից են էներգետիկայի, մեքենաշինական և սննդի արդյունաբերության, հանքարդյունահանման, շինանյութերի (ցեմենտի) և փայտամշակման ոլորտները:

Արդյունաբերության արտադրանքի մեծ մասը արտահանվում է արտասահման՝ Ռուսաստանի Դաշնություն, Չինաստան, Վրաստան, Բուլղարիա, Իրանի Իսլամական Հանրապետություն:

Տնտեսության զարգացման հեռանկարները կապված են մշակող արդյունաբերության աճի, հանքային հարստությունների շահագործման և մերձերևանյան գոտում գյուղատնտեսական արտադրանքի ավելացման հետ:

Գյուղատնտեսությունը մարզի տնտեսության կարևոր ճյուղերից մեկն է: Հայաստանի այս մարզում գյուղատնտեսական արտադրությունը հիմնականում կազմակերպվում է գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների միջոցով:

Ըստ 2020 թվականի տվյալների ՀՀ Կոտայքի մարզի վարչական տարածքի մակերեսը կազմում է 209223.2 հա կամ 2092.2կմ², այդ թվում՝

- 1) գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 155236.5 հա, այդ թվում՝
 - վարելահողեր – 37419.2 հա,
 - պտղատու այգիներ – 2694.2 հա,
 - խաղողի այգիներ – 434.2 հա,
 - այլ բազմամյատնկարկներ – 1.2 հա,
 - խոտհարքներ – 11269.7 հա,
 - արոտավայրեր – 79461.0 հա,
 - այլ հողատեսքեր – 23956.9 հա,
- 2) բնակավայրերի – 15781.9 հա,
- 3) արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության – 3453.6 հա,
- 4) էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների – 1468.6 հա,
- 5) հատուկ պահպանվող տարածքների – 8692.4 հա,
- 6) հատուկ նշանակության – 730.5 հա,
- 7) անտառային – 22898.9 հա,
- 8) ջրային – 960.8 հա,

9) պահուստային հոդերի – 0.0 հա:

Կոտայքն առանձնանում է նաև իր ռեկրեացիոն ռեսուրսներով, որոնց օգտագործման շնորհիվ զարգանում է բնակչության հանգստի կազմակերպման ճյուղը: Այստեղ են գտնվում Արզնի և Հանքավան առողջարանները (հանքային աղբյուրների մոտ), Մարմարիկի առողջարանային գոտին՝ հանգստի ու առողջարանային բազմաթիվ ճամբարներով:

Մարզի տարածքում են գտնվում հազարից ավելի պատմամշակութային օբյեկտներ՝ կրոնական կառույցներ, հայտնի անձանց տուն-թանգարաններ, խաչքարեր և այլն: Մարզում գրանցված են ավելի քան 2024 պատմամշակութային արժեքներ և հուշարձաններ:

Բազմազան ու հարուստ են տարածաշրջանի օգտակար հանածոները: Մեծ արժեք են ներկայացնում նեֆելինային սիենիտների, ոսկու, երկաթի, տիտանի, մարմարի, բազալտի, կրաքարի, պերլիտի, հանքային ջրերի (Արզականի, Բջնիի, Հանքավանի, Քարաշամբի, Արզնիի) և այլ շինանյութերի հանքավայրերը:

ՀՀ Կոտայքի մարզը բաղկացած է երեք տարածաշրջաններից՝ Հրազդանի, Աբովյանի և Նաիրիի:

Կոտայքի կենտրոնական տարածաշրջանը Հրազդանն է: Մարզկենտրոնն է քաղաք Հրազդանը: Մարզկենտրոնից մինչև մայրաքաղաք հեռավորությունը կազմում է 45.0կմ: Մարզի երկրորդ քաղաքը Աբովյանն է: Այն ստեղծվել է որպես Երևանի արբանյակ քաղաք: Այստեղ ստեղծվել են աշխատատար ճշգրիտ մեքենաշինության, հատկապես էլեկտրոնային սարքաշինության հզոր ձեռնարկություններ, որոնք, սակայն, ներկայումս չեն աշխատում: Չարենցավանը հայտնի է որպես մեքենաշինության, Արզնին՝ հանքային ջրերի արտադրության ու առողջարանային, Նոր Հաճնը՝ սարքաշինության ու թանկարժեք քարերի մշակման, Եղվարդը՝ թեթև և սննդի արդյունաբերության, Բյուրեղավանը՝ ապակե տարաների և հախճապակու արտադրության, Ծաղկաձորը՝ հանգստի կազմակերպման կենտրոն:

Աբովյանի տարածաշրջանը գտնվում է Ազատ և Հրազդան գետերի միջև, Կոտայքի սարավանդի վրա: Հյուսիս-արևելքում բարձրանում են Գեղամա լեռնաշղթայի Աժդահակ լեռը՝ 3597մ բարձրությամբ և Ողջաբերդի լեռնաբազուկը: Հյուսիսում Հատիս /2528մ/ և

Գութանասար /2299 մ/ լեռներն են՝ հանգած հրաբուխներով: Արևմուտքում ձգվում է Հրազդանի կիրճը, իսկ հարավում՝ Նորքի բարձրությունը: Տարածքով անցնում են Գետառ, Հրազդան, Ազատ գետերը, որոնք ունեն ոռոգիչ նշանակություն: 3030մ բարձրության վրա գտնվում է Ակնա լիճը: Աբովյանի տարածաշրջանում է գտնվում մեծ լուսավորչի անունը կրող քաղաք Աբովյանը և երիտասարդ քաղաք Բյուրեղավանը:

Գյուղական համայնքներն են՝ Ակունք, Առինջ, Արամուս, Արգնի, Բալահովիտ, Գեղաշեն, Զառ, Զովաշեն, Զովք, Կաթնաղբյուր, Կամարիս, Կապուտան, Կոտայք, Հատիս, Զորաղբյուր, Մայակովսկի, Նոր գյուղ, Նուռնուս, Պտղնի, Ջրաբեր, Ջրվեժ, Սևաբերդ, Վերին Պտղնի, Գառնի, Գեղաղիր, Գեղարդ, Գողթ, Հացավան, Ողջաբերդ:

Աբովյանի տարածաշրջանում են գտնվում Հայաստանի ամենաշատ այցելվող պատմամշակութային կառույցներից երկուսը՝ Գառնու տաճարը և Գեղարդի վանքը:

Հոգևոր-մշակութային նշանավոր կառույց է Բջնիի բերդը՝ 1031թ. կառուցված սբ. Աստվածածին եկեղեցիով:

Արգնի ազդակիր համայնքը հիմնադրվել է 1829թ.: Նախկինում կոչվել է Արծնի, Սարջալա, ասորաբնակ լինելու համար կոչվել է նաև Արգնի-Ասորիք:

ՀՀ Կոտայքի մարզի Արգնի ազդակիր համայնքի վարչական տարածքի մակերեսը կազմում է 1807.71 հա: Հեռավորությունը մայրաքաղաքից կազմում է 18 կմ: Համայնքի բնակչության թիվը կազմում է 2998 մարդ, ապրում են հայեր, ասորիներ, եզդիներ: Համայնքում գործում է միջնակարգ դպրոց: Համայնքը չունի մշակութային և մարզական հաստատություններ: Համայնքում գործում են «Արգնու ՏԹՏԽ» ԲԲ և «Բեկոն Պրոդուկտ» ՍՊ ընկերությունները: Բնակչության հիմնական զբաղմունքը հողագործությունն է և անասնապահությունը:

Հոգևոր-մշակութային նշանավոր կառույցներից են 7-րդ և 14-րդ դարի եկեղեցիները: Պատմամշակութային հուշարձաններից են՝ 1941-1945 թ.թ. հայրենական մեծ պատերազմի և 1915թ. անմեղ զոհերի հիշատակի հուշարձաններ:

Ներկայումս գյուղը հայտնի է որպես առողջարանային գոտի, որտեղ գործում են 5 առողջարաններ: Վերջիններում հիմնականում բուժվում են աղեստամոքսային տրակտի, սրտի իշեմիկ եւ ռևմատիկ հիվանդություններ: Գյուղից ոչ հեռու գտնվում է Արգնի ՀԷԿ-ը:

Հանքային ջրերի արդյունահանման աշխատանքների բնույթը և շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը ներկայացվել են ազդակիր համայնքի բնակիչներին: Քննարկվել է ծրագրավորվող աշխատանքներին համայնքի բնակիչների ներգրավման հարցը:

3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Ընդհանուր տեղեկություններ. Արգնի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի Աբովյանի տարածաշրջանի Արգնիի առողջարանի տարածքում Երևանից 24 կմ դեպի հյուսիս, Հրազդանի կիրճում, գետի ձախ ափին (տե՛ս նկար 1):

Չարենցավան և Հրազդան քաղաքների միջով է անցնում Երևան-Սևան երկաթգիծը: Հանքավայրի մոտակայքից է անցնում բարեկարգ ասֆալտապատ Երևան-Սևան-Նոյեմբերյան մայրուղին:

Մոտակա երկաթգծի կայան է հանդիսանում ք.Աբովյանը, որն հանքավայրից գտնվում է 5.0 կմ հեռավորության վրա:

Բազմազան ու հարուստ են տարածաշրջանի օգտակար հանածոները: Մեծ արժեք են ներկայացնում նեֆելինային սիենիտների, ոսկու, երկաթի, տիտանի, մարմարի, բազալտի, կրաքարի, պերլիտի, հանքային ջրերի (Արգականի, Բջնիի, Հանքավանի, Քարաշամբի, Արգնիի) հանքավայրերը և այլն:

Երկրաձևաբանություն. Հրազդան գետի երկու ափերին, տարածվում են Կոտայքի և Եղվարդի թույլ մասնատված լավային սարավանդները, որոնց հետ է կապված Արգնի առողջարանի շրջանը: Կոտայքի սարավանդն ընկած է Հրազդան գետի միջին հոսանքի ձախափնյա մասից մինչև Գեղամա լեռների արևմտյան ստորոտը:

Մարզի հարթավայրերն են՝ Եղվարդի հարթավայրը (գտնվում է ծովի մակերևույթից 1200-1300 մետր բարձրության վրա) և Հրազդանի սարահարթը (ծովի մակերևույթից՝ 1700-1800 մետր բարձրության վրա):


Այդ երկու սարավանդներն իրարից բաժանված են Հրազդան գետի խորը կիրճով, որն ունի խիստ մասնատված երոզիոն-կառուցվածքային ռելիեֆ: Կիրճի միջին խորությունը 100.0մ է, իսկ լայնությունը՝ 0.5–1.0կմ: Գեոմորֆոլոգիական տեսակետից հանքավայրի տարածքը գտնվում է Ծաղկունյաց լեռնաշղթայի հարավային լանջի սահմաններում:

Ռելիեֆը խիստ բարդացված է բազմաթիվ համեմատաբար նեղ և խորը Y-ա ձև կիրճերով և ձորակներով:


Թեք ու անտառագուրկ լանջերում շատ են հեղեղատներն ու փոքր հովիտները:

Հանքավայրի հիպոտետրիկ բացարձակ նիշերը տատանվում են 1270.0-1290.0 մ սահմաններում:

Ստորև ներկայացվում է մակերևույթի գերակշռող թեքությունները՝



Ստորև ներկայացվում է Ռելիեֆի ձևագրական տիպերը՝



Ջրային ռեսուրսներ. Հայաստանի Հանրապետության գետերը պատկանում են Կուրի և Արաքսի ավազաններին: Արաքսի ավազանն ընդգրկում է հանրապետության տարածքի 76%-ը, իսկ Կուրի ավազանը՝ 24%-ը: Ջրբաժան գիծն անցնում է Ջավախքի, Փամբակի, Արեգուու և Սևանի լեռների կատարներով:

Արգնիի հանքավայրի տարածքը պատկանում է Արաքսի ավազանին (տես՝ նկար 2): Կոտայքի մարզն աչքի է ընկնում ներքին ջրերի առատությամբ:

Գետերից Հրազդանը, Գետառը, Ագատը ունեն ոռոգիչ նշանակություն:

Հրաբխածին-նստվածքային ապարների մեջ ներծծված ջրերն աղբյուրների տեսքով դուրս են գալիս լեռների ստորոտներում, ինչպես նաև Հրազդան և Ագատ գետերի կիրճերում:

Տարածաշրջանի գլխավոր ջրային երակն է Հրազդան գետն է, որը սկիզբ է առնում Սևանա լճից և թափվում է Արաքս գետը: Գետի երկարությունը 146.0 կմ է:

Լճից բաց թողնվող ջրի քանակը կարգավորվում է: Գետի ջրերը օգտագործվում են էներգետիկ նպատակով, կառուցվել է ջրէկների կասկադ: Հրազդանի վրա կառուցված են նաև ջրամբարներ, որոնցից առավել խոշոր են Երևանյան լիճը և Հրազդանի ջրամբարը՝ Հրազդան քաղաքում: Գետից սնվում են մի շարք ջրանցքներ, որոնց միջոցով ոռոգվում են Արարատյան դաշտի հողերը:

Հրազդան գետի վտակներից են Մարմարիկ, Բջնի, Դալար, Գետառ և այլ գետերը:

Կլիմա. Լինելով տիպիկ լեռնային երկիր՝ ՀՀ-ում կլիմայի փոփոխությունը տեղի է ունենում ըստ ծովի մակերևույթից ունեցած բարձրության: ՀՀ-ում առանձնացվում են կլիմայի վերընթաց 8 գոտիներ:

Տարածաշրջանի կլիման բնութագրվում է բազմազանությամբ և ուղղաձիգ գոտիականությամբ: Հանքավայրի տեղամասը ունի չափավոր ցամաքային գոտու կլիմային գծեր՝ բնութագրվում է մեղմ մայրցամաքային կլիմայով՝ խիստ ամառ և ձմեռ ունեցող կլիմա (տես նկար 3):

Շրջանի կլիման ըստ բարձրության փոխվում է տաք չոր ցամաքայինից մինչև ձյունամերձը: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը տատանվում է 10 °C-ից մինչև 2.5 °C:

Տարվա ամենատաք ամիսը **հուլիսն** է, իսկ ամենացուրտը՝ հունվարը: Կոտայքի մարզի ցածրադիր շրջաններում միջին հունվարյան ջերմաստիճանը կազմում է 4.5-5 °C:

Մասշտաբ 1:2 000 000



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԼԻՄԱՅԻ ՎԵՐԸՆԹԱՅ ԳՈՏԻՆԵՐԸ

Մասշտաբ 1 : 2 000 000



Բարձրադիր շրջաններում հունվարյան ջերմաստիճանը նվազում է մեկ և ավելի ջերմաստիճանով՝ -3.6°C :


Կոտայքի մարզի բարձրադիր շրջաններում ամառվա ամենատաք ամսին գրանցվում է միջինում 8.7°C ջերմություն: Ցածրադիր շրջանների եղանակային պայմանները բավականին տարբեր են: Միջին հուլիս-օգոստոսյան ջերմաստիճանը ցածրադիր գոտիներում կազմում է 22.2°C և ավելի:

Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը կազմում է՝ 400-970 մմ: Տարբեր ամիսներին տեղում է անձրև, կարկուտ, իսկ ձմեռային ամիսներին՝ ձյուն:

Անսառնամանիք օրերի թիվը մարզի ստորին գոտում կազմում է շուրջ 200 օր:

Ամենուր դիտվում են լեռնահովիտային քամիներ: Օդի բազմամյա միջին տարեկան հարաբերական խոնավությունը կազմում է 67.0%:

Կլիմայի տարածման սխեմատիկ քարտեզ



Հողաբուսական ծածկույթ. Կոտայքի մարզի հողաբուսական ծածկույթը բավականին խայտաբղետ է: Գերակշռում են լեռնատափաստանային և լեռնաշագանակագույն, բարձրադիր վայրերում՝ ենթալպյան լեռնամարգագետնային, սևահողանման ու դարչնագույն հողերը: Սարավանդներին բնորոշ են շագանակագույն հողերը և չոր տափաստանային լանդշաֆտները: Լեռնալանջերին սևահողային ծածկույթի վրա ձևավորվել են լեռնային տափաստաններ: Ծաղկունյաց լեռների և Մարմարիկի հովտի անտառների տակ տարածվում են գորշ դարչնագույն հողերը: Բարձրադիր լեռնային գոտուն բնորոշ է լեռնամարգագետնային լանդշաֆտը: Գետահովիտներում կուլտուրացված

ոռոգվող հողեր են: Բարձրադիր մասերում տարածված են խոտհարքներն ու ամառային վայրերը:

Հանքային ջրի հանքավայրի և առողջարային համալիրի տարածքը գտնվում է լեռնատափաստանային լանդշաֆտային գոտու սահմաններում, որին բնորոշ են լեռնաշագանակագույն հողերը (տես՝ նկարներ 4 և 5):

Այս հողերը ձևավորվում են շոգ և համեմատաբար չոր կլիմայական պայմաններում, հումուսով ավելի հարուստ են (4-5%), ունեն ավելի հզոր շերտ (40-50 սմ): Դրանք պիտանի են հացահատիկների մշակման, ծխախոտագործության, պտղաբուծության ու այգեգործության, ինչպես նաև մերձարևադարձային բույսերի (թզենի, նոնենի, ձիթենի) աճեցման համար: Այս հողերում մշակում են հացահատիկային, բանջարաբուստանային բույսեր, պտղատու ծառեր:

Բուսականության տեսակային կազմի տարածքային տարբերությունը համընկնում է կլիմայի և հողերի վերընթաց գոտիականությանը:

Տափաստանային գոտու բուսականությունը մեր հանրապետությունում տարածված 1400-2400 մ բարձրություններում: Այս գոտուն բնորոշ է փետրախոտային, սիզախոտային, իսկ բարձրադիր մասում՝ հացազգի-տարախոտային բուսականությունը: Տափաստանային գոտու վերին սահմանին մոտ, որտեղ խոնավությունը բավարար է, աճում են մերձալպյան բարձրախոտերը: Այս տարածքները լավ խոտհարքեր են:

Կոտայքի մարզի բուսականության հիմնական տիպերի աշխարհագրական տեղաբաշխումը պայմանավորված է վերընթաց գոտիականությամբ: Փամբակի և Ծաղկունյաց լեռների լանջերին աճում են հաճարենի, կաղնի, բոխի, սոճի, կեչի, թեղի, հացենի և այլն:

Կոտայքի մարզում հատկապես առատ են մշակաբույսերի վայրի ազգակիցները՝ ցորենը, աշորան, գարին, վարսակը, ճակնդեղը, կորիզավոր, կերային, զանազան հատապտուղներ, բանջարանոցային բուսատեսակներ և այլն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԱՆԴՇԱՖՏԱՅԻՆ ԳՈՏԻՆԵՐԸ

Մասշտաբ 1:2 000 000




ՀՀ ՀՈՂԱՅԻՆ ԾԱԾԿՈՒՅԹԸ

Մասշտաբ 1:2 000 000




Ստորև ներկայացվում է հողերի տարածման սխեմատիկ քարտեզը՝



ՀՈՂԱՅԻՆ ՏԻՊԵՐ

1	Լեռնամարգագետնային ճմառորձային խճային	32	Սևահող տիպիկ ալրային կարբոնատային
2	Լեռնամարգագետնային ճմային խորքային հագեցած	24	Անտառային դարչնագույն կարբոնատային տափաստանացված
3	Լեռնամարգագետնային ճմային խորքային չհագեցած	34	Սևահող կարբոնատային մնացորդային կարբոնատային
4	Լեռնամարգագետնային թույլ ճմային խորքային հագեցած	35	Մարգագետնասևահողային կոպճային
5	Լեռնամարգագետնային թույլ ճմային խորքային չհագեցած	36	Մուգ շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
7	Մարգագետնատափաստանային սևահողանման խճաքարային	37	Մուգ շագանակագույն մնացորդային կարբոնատային
9	Մարգագետնատափաստանային տիպիկ մնացորդային չհագեցած	38	Շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
12	Անտառային գորշ ուժեղ չհագեցած կավայնացած	39	Շագանակագույն մնացորդային կարբոնատային
17	Անտառային դարչնագույն կրազերծված խճաքարային	55	Գետահովտադարավանդային մարգագետնային կոպճային
18	Անտառային դարչնագույն կրազերծված տափաստանացված	56	Գետահովտադարավանդային մարգագետնացած կոպճային

Ստորև ներկայացվում է բուսականության տիպերի սխեմատիկ քարտեզը՝



**ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
ԲՆԱԿԱՆ ԲՈՒՍԱԾԱԾԿԻ ՏԻՊԵՐ**

- Մարգագետնային բուսականություն**
 - 1 Բարձրալպյան տարախոտա-հացազգա-բոշխային (գորգեր) մասնակցությամբ՝ *Campanula tridentata* Schreb., *Carex tristis* Bieb., *Taraxacum stevenii* DC., *Plantago saxatilis* Bieb., *Colpodium araraticum* Tarutv., *Poa alpina* L., *Carum caucasicum* (Bieb.) Boiss., *Nardus glaberrima* Sakalo, *Sibbaldia parviflora* Willd.
 - 2 Ցածրալպյան (ենթալպյան) հացազգիների և տարախոտա-հացազգային, մասնակցությամբ՝ *Bromopsis variegata* (Bieb.) Holub, *Hordeum violaceum* Boiss. et Huet, *Anemonastrum fasciculatum* (L.) Holub, *Betonica macrantha* C. Koch, *Veronica Gentiana*, *Cephalaria*, *Inula*, *Myosotis* ցեղի տեսակների հետ համատեղ
- Մարգագետնափայտափայտային բուսականություն**
 - 3 Մասնակցությամբ՝ *Festuca versicolor* Tausch, *F. ovina* L., *F. valesiaca* Gaudin, *Phleum pratense* L., *Hordeum violaceum* Boiss. et Huet, *Carex humilis* Leys, *Trifolium ambiguum* L.
- Անտառային բուսականություն**
 - 4 Լայնատերև, մասնակցությամբ՝ հաճախնու (*Fagus orientalis* Lipsky) կաղնու (*Quercus iberica* Stev. *Q. macranthera* Fisch. et Mey. ex Hohen), բոխու (*Carpinus betulus* L., *C. orientalis* Mill), հալեռնու (*Fraxinus excelsior* L.), լոբնու (*Tilia begoniifolia* Stev.).
 - 5 Կաղնուտներ, մասնակցությամբ՝ *Quercus macranthera* Fisch. et Mey. ex Hohen., *Q. boissieri* Beut., *Q. araxina* (Trautv.) Grossh
 - 6 Անտառային խառը մշակաբույսեր, մասնակցությամբ՝ *Pinus pallasiana* D. Don, *P. banksiana* Lamb., *Fraxinus excelsior* L., *Hippophae rhamnoides* L., տեսակներ *Salix*, *Acer*, *Ulmus* և ալպազուտային տարախոտերի
- Զւերոֆիլ անտառային բուսականություն**
 - 7 Գիհու խառը, մասնակցությամբ՝ *Juniperus polycarpus* C. Koch, *J. oblonga* Bieb., *J. hemisphaerica* J. et C. presl., *J. foetidissima* Willd., *J. Sabina* L., *Ephedra procera* Fisch. et Mey.
 - 8 Սաղարթավոր խառը, մասնակցությամբ՝ *Paliurus spina-christi* Mill., *Spiraea crenata* L., *Amugdalu fencliana* (Fritsch) Lipsky, *Pistacia nutica* Fisch. et Mey. *Celtis glabrata* Stev. Ex Planch., *Cerasus incana* (Pall.) Spach, *Pyrus salicifolia* Pall.

Կենդանական աշխարհը. Կենդանական աշխարհի տեղաբաշխումն իր հերթին համապատասխանում է բուսական գոտիների դասավորությանը: Կոտայքի մարզի կենդանական աշխարհին բնորոշ են հիմնականում լեռնատափաստանային կենդանատեսակները: Մարզի տարբեր շրջաններում հանդիպում են գայլ, աղվես, նապաստակ և այլն:

Մեծ է նաև օձերի տեսակների բազմազանությունը: Կոտայքի մարզի տարբեր գոտիներում հանդիպում են ինչպես անվտանգ, այնպես էլ թունավոր օձեր: Կոտայքի մարզի սողունների գլխավոր ներկայացուցիչներից է հայկական լեռնատափաստանային իծը, որն ապրում է մարզի լեռնային շրջաններում: Այս աշխարհագրական տեղամասում ապրում են նաև մի շարք թռչուններ՝ ալպիական ճայ, տափաստանային արծիվ և այլն:

Տափաստանային գոտում համեմատաբար շատ են կրծողները և թռչունները, քիչ են սողուններն ու երկկենցաղները: Լայն տարածում ունեն ճագարամուկը, գետնասկյուռը, դաշտամուկը, խլուրդը, իսկ գիշատիչներից հանդիպում է ժանտաքիսը: Թռչուններից նշանավոր են միջատակեր սարյակները, սևճակատ շամփրուկը, որոնք սնվելով մշակաբույսերին վնասող միջատներով է մեծ օգուտ են տալիս գյուղատնտեսությանը:

Հանքային ջրի հանքավայրի և առողջարային համալիրի տարածքում բույսեր կամ կենդանիներ, որոնք գրանցված են ՀՀ Բույսերի կամ Կենդանիների Կարմիր գրքերում բացակայում են:

Հանքային ջրերի արդյունահանման աշխատանքների բացասական ազդեցությունը հանքավայրի տարածաշրջանի բուսական և կենդանական աշխարհի վրա գործնականում զրոյական է:

Բուն հանքավայրի տարածքում բնության, պատմության և մշակույթի հուշարձաններ հաշվառված չեն: Այստեղ կարելի նշել՝ «Թանթրվենի, Տիգրանի» կենսաբանական հուշարձանը, որը գտնվում է Արզնի առողջարանի մոտ, Հրազդան գետի ափին, ծովի մակերևույթից 1350մ բարձրության վրա և «Քաղցր» աղբյուր ջրաերկրաբանական հուշարձանը, որը գտնվում է Արզնի գյուղից 150.0մ հարավ-արևմուտք, Հրազդան գետի ձախ ափին, ծովի մակերևույթից 1300մ բարձրության վրա:

Սողանքային երևույթներ հանքավայրի տարածքում չեն արձանագրվել:

Հանքավայրի և առողջարանի տարածքը գտնվում է բնակավայրերից հեռու, այստեղ չկան գործող արդյունաբերական և խոշոր գյուղատնտեսական ձեռնարկություններ, համապատասխանաբար օդային ավազանը չի կրում անտրոպոգեն զգալի ազդեցություն:

Աշխատանքների կատարման ընթացքում ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, հաշվի առնելով աշխատանքների բնույթը, կլիմայի աննշան և չի հանգեցնի էկոհամակարգերի վրա բացասական ճնշումների դրսևորմանը:

Ստորև ներկայացվում է կենդանատեսակների սխեմատիկ քարտեզը՝



ԿԵՆԴԱՆԱՏԵՍԱԿՆԵՐ

	Եվրոպական այծյամ		Նապաստակ
	Վայրի խոզ		Գյուրգա
	Գորշ արջ		Լուսան
	Գորշուկ		

Սողանքներ.



Ըստ ՀՀՇՆ II-2-94 «Սեյսմակայուն Շինարարություն Նախագծման Նորմեր» նորմատիվային փաստաթղթի դրույթների տեղամասի տարածքը գտնվում է առաջին սեյսմիկ գոտու մեջ: Այդ գոտուն համապատասխանում է 0,1-0,2g հորիզոնական արագացման արժեքը:

Սողանքային երևույթներ հանքավայրի տարածքում չեն արձանագրվել: Մոտակա սողանքային մարմինները գտնվում է հանքավայրից մոտ 3.2կմ հյուսիս-արևելք:

Ստորև ներկայացվում է սողանքների տարածման սխեմատիկ քարտեզը՝



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

-  Սողանքներ
-  Խոշոր սողանքային տարածքներ
- Հողմասհարման գույրիներ*
-  Ջերմաքիմիական
-  Ջերմակենսաքիմիական
-  Ջերմասառնամանիքային
-  Նեոտեկտոնական բարձրացումների հավասարագծեր (կմ)
-  Տեկտոնական խախտումներ

ՀՀ Կոտայքի մարզի հուշարձանների ցանկը

ՀՀ Կոտայքի մարզի հուշարձանների ցանկը համաձայն ՀՀ կառավարության 967-Ն որոշման՝

Երկրաբանական հուշարձաններ՝

- **Գետնազաղա»** անձավային թունելԼոռու մարզ, Լոռիքերդ գյուղից 2 կմ հվ-արլ, Ձորագետի ձախ ափին, հունից 40մ բարձրության վրա
- **«Անանուն»** խզվածքներ Կոտայքի մարզ, Եղվարդ ավանից հվ, ավազահանքի մոտ
- **Թագավորանիստ** խարամային կոնի պեմզաների և խարամների կոնտակտԿոտայքի մարզ, Եղվարդ քաղաքից 3.5կմ դեպի հարավ
- **«Թագավորանիստ»** խարամային կոնԿոտայքի մարզ, Եղվարդ ավանից 3կմ հվ, Աշտարակ տանող խճուղու ձախ կողմում
- **«Պեռլիտե փիղ»** քարե քանդակԿոտայքի մարզ, Չարենցավան քաղաքից 2կմ հվ, քարահանքի մոտ
- **«Անանուն»** բյուրեղային թերթաքարերի ու վերին կավճի կրաքարերի կոնտակտԿոտայքի մարզ, Բջնի գյուղի արևմտյան ծայրամասում
- **«Ծակ քար»** բնական թունելԿոտայքի մարզ, Բջնի գյուղի մատույցներում, Հրազդան գետի ձախափին
- **«Բազալտե երգեհոն»** սյունաձև բազալտներԿոտայքի մարզ, Գառնի գյուղից մոտ 1.0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
- **«Անանուն»** քարայր սյունաձև բազալտներումԿոտայքի մարզ, Գառնի գյուղից մոտ 1,0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
- **«Անանուն»** լանջային երոզիաԿոտայքի մարզ, Ազատ գետի աջակողմյան ափերին
- **«Անանուն»** լավային ծալքեր Կոտայքի մարզ, Գառնի գյուղից մոտ 1.0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
- **«Անանուն» խորշերԿոտայքի** մարզ, Գողթ գյուղից մոտ 3.0 կմ հս-արլ
- **«Հատիս»** հրաբուխ Կոտայքի մարզ, Զովաշեն գյուղից 2.0 կմ արմ
- **«Ավազան»** հրաբխային գմբեթԿոտայքի մարզ, Կարենիս (Գյումուշ) գյուղից 1.5 կմ հս-արլ
- **«Գյումուշ»** հրաբխային գմբեթ Կոտայքի մարզ, Կարենիս (Գյումուշ) գյուղից 0.5 կմ հս-արլ

- «Անանուն» ապարների բնորոշ մերկացում Կոտայքի մարզ, Նուռնուս գյուղի և Գյումուշ ՀԷԿ-ի միջև
- «Անանուն» օբսիդիանի ելքեր Կոտայքի մարզ, Ջրաբեր գյուղից մոտ 1.5 կմ հս-արմ, Երևան-Սևան խճուղու աջ կողմում
- «Անանուն» քարե կուտակումներ Կոտայքի մարզ, Քաղսի գյուղի հվ-արմ եզրին, Հրազդանի կիրճում
- «Գուրանասար» հրաբուխ Կոտայքի մարզ, Ֆանտան գյուղից 3 կմ հվ
- «Լեռնահովիտ» քարային կուտակումներ Կոտայքի մարզ, Ֆանտան գյուղից 4-5 կմ հվ-արլ, «Թեզխարաբ» գյուղատեղիի մոտ
- «Ձորաղբյուրի» (Մանգյուսի) բրածո ֆլորա Կոտայքի մարզ, գյուղ Ձորաղբյուր

Ջրաերկրաբանական հուշարձաններ

- «Հաղպրտանք» աղբյուր Կոտայքի մարզ, Հրազդան քաղաքի Վանատուր (Աթարբեկյան) թաղամասի արլ ծայրամասում, 1.5 կմ հս-արմ, ծ.մ-ից 1755 մ բարձրության վրա
- «Համով» աղբյուր Կոտայքի մարզ, Ակունք գյուղի հվ-արմ ծայրամասում, եկեղեցու մոտ, ծ.մ-ից 1450 մ բարձրության վրա
- «Քաղցր» աղբյուր Կոտայքի մարզ, Արզնի գյուղից 150 մ հվ-արմ, Հրազդան գետի ձախ ափին, ծ.մ-ից 1300 մ բարձրության վրա
- «Ձորի» աղբյուր Կոտայքի մարզ, Գողթ գյուղից 0.3 կմ հս-արլ, Գողթ գետի աջ ափին, ծ.մ-ից 1580 մ բարձրության վրա
- «Աուզի» աղբյուր Կոտայքի մարզ, Կաթնաղբյուր գյուղից 0.3 կմ հս-արլ, ծ.մ-ից 1450 մ բարձրության վրա

Ջրագրական հուշարձաններ

- «Ղազ» լիճ Կոտայքի մարզ, Գեղարդ գյուղից մոտ 4 կմ հս
- «Վիշապա» լիճ Կոտայքի մարզ, Գեղարդ գյուղից մոտ 4 կմ արլ
- «Բիշար» լիճ Կոտայքի մարզ, Սարաբերդ (Սևաբերդ) գյուղից մոտ 3 կմ հս
- «Զեյնալ» լիճ Կոտայքի մարզ, Սարաբերդ (Սևաբերդ) գյուղից մոտ 7 կմ հս-արլ

Կենսաբանական հուշարձաններ

- «Ալայան գորգ» Կոտայքի մարզ, Մեղրաձոր-Ֆիոլետովո գրունտային ճանապարհի ամենաբարձր մասում (Փամբակ լեռնաշղթայի Ամպասարի գագաթային մասում, 300 մ բարձրության վրա)
- «Թանթրվենի, Տիգրանի» Կոտայքի մարզ, Արզնի առողջարանի մոտ, Հրազդան գետի ափին, ծ.մ-ից 1350 մ բարձրության վրա

Կոտայքի մարզի Արզնի գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը 2002 թ. հաստատվել է Հայաստանի կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 42 հուշարձան (17 միավոր):

հուշարձան	կառուցված	վայր, հասցե
«Արզնի» Առողջարանի համալիրը		Հրազդանի ձորում
Գլխավոր մասնաշենքը		
Ընկերակարահիւ		
Լոգարանների շենքը		
Բացօթյա կայան	քարի դար	«Արզնի» առողջարանի մոտ, աջափնյա դարավանդի վրա
Բնակատեղի	Ք.ա. 2-1 հազ., միջնադար	գյուղի ամեզրին, ձորաբերանին
Մատուռ		բնակատեղի տարածքում
Խաչքար	13 դ.	մատուռի ներսում
Գերեզմանոց	միջնադար	մատուռի մոտ
Խաչքար	13 դ.	
Խաչքար	17 դ.	
Դամբարանադաշտ	Ք.ա. 2 դ.	Հրազդան գետի ափին, խճուղու եզրին
Եկեղեցի	7 դ.	գյուղի ամ եզրին, Հրազդանի ձախ ափին
Խաչքար	1577 թ.	ազուցված է ամ ճակատի հվ կողմում
Խաչքար, կազմող՝ Քիրամ	1593 թ.	ազուցված է ամ ճակատի հս կողմում
Գերեզմանոց	13-17 դդ.	Սբ. Հակոբ եկեղեցուց հվ և աե
Խաչքար	13 դ.	եկեղեցուց 20 մ աե
Խաչքար	13 դ.	եկեղեցուց 18 մ աե
Տապանաքար	15-16 դդ.	եկեղեցուց հվ-աե

Եկեղեցի	10 դ.	գյուղի ամ եզրին
Եկեղեցի	12 դ.	«Արզնի» առողջարանի N 1 հանգստյան տան մոտ
Եկեղեցի	13 դ.	կամրջի մոտ
Եկեղեցի Սբ. Կիրակի	6 դ.	գյուղի մեջ
Եկեղեցի Սբ. Մարիամ Աստվածածին	17-19 դդ.	գյուղի ամ եզրին, Հրազդանի ձորի ափին, այգիների մեջ
Խաչքար Գրիգորի, Եթարի	1611 թ.	ագուցված է եկեղեցու խորանի հս կողմում
Խաչքար Թաթուսի	1618 թ.	ագուցված է եկեղեցու խորանի հվ կողմում
Խաչքար	15-16 դդ.	ագուցված է եկեղեցու խորանում
Խաչքար	15-16 դդ.	ագուցված է եկեղեցու խորանում
Գերեզմանոց	15-19 դդ.	եկեղեցու շուրջը
Եկեղեցի Սբ. Մարիամ Աստվածածին	1881 թ.	գյուղի ամ մասում
Խաչքար	15-16 դդ.	ագուցված է եկեղեցու հվ ճակատին
Զանգակատուն	19 դ.	կից է եկեղեցուն ամ-ից
Խաչքար	16-17 դդ.	ագուցված է հս որմնամույթի վրա
Հուշարձան 1915 թ. Մեծ Եղեռնի զոհերին	2002 թ.	եկեղեցու մոտ
Կոթող	5-6 դդ.	գյուղի մեջ
Կոթող	5-6 դդ.	գյուղի մեջ
Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1977 թ.	գյուղի մեջ
Մատուռ Սբ. Պողոս-Պետրոս	13-14 դդ.	գյուղի ամեզրին
Քարայր-կացարանների համալիր	քարի դար-միջնադար	գյուղից ներքև, Հրազդանի ձորի աջ ափին
Քարայր-մատուռ Սբ. Սարգիս	1431 թ.	գյուղի հս-ամ մասում, ձորալանջին
Խաչքար	1431 թ.	մատուռի ներսում

Նշված հուշարձանները գտնվում են հորատանցքերից ավելի քան 3,2կմ հեռավորության վրա, ուստի որևէ ազդեցություն նշված հուշարձանների վրա նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում բացառվում է:

Հանքավայրի պաշարները. Արգնիի տեղամասի հիդրոերկրաբանական պայմանների ուսումնասիրության նպատակով որոնողա-հետախուզական և հետախուզական աշխատանքները, որոնք ուղեկցվել են ինչպես հորատման, այնպես էլ համալիր հիդրոերկրաբանական փորձնական աշխատանքներով, կատարվել են 1962-1966թ.թ.-ին, ինչպես նաև 1999-2001թ.թ.-ին՝ ռեժիմային հիդրոերկրաբանական դիտարկումների հիման վրա պաշարների վերագնահատման նպատակով:

ՀՀ Կոտայքի մարզի Արգնի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի հանքային ջրի և ազատ ածխաթթու գազի շահագործական պաշարները 01.07.1966թ.-ի դրությամբ հաստատվել են 27.05.1967թ.-ին նախկին ԽՍՀՄ Պաշարների Պետական Հանձնաժողովի կողմից (ՊՊՀ) (արձանագրություն N5164) և 01.01.2002թ.-ի դրությամբ և վերահաստատվել են ՀՀ օգտակար հանածոների պաշարների գործակալության (ՕՀՊԳ) կողմից 30.06.2003թ.-ին (արձանագրություն թիվ12,) երեք կապտաժային հորատանցքերով (1/62, 3/62 և 6/64) և կարող են օգտագործվել շշալցման, բուժման (հոր. 1/62, 3/62 և 6/64) և ազատ ածխաթթու գազի կորզման համար (հոր. 1/62):

Հանքային ջրի շահագործողական պաշարները կազմում են 19.14լ/վրկ կամ 1654.0 մ³/օր, իսկ ազատ ածխաթթու գազի պաշարները՝ 4.5 մ³/մ³ կամ 6.4 գ/լ, այդ թվում՝

Հանքային ջրի պաշարներ՝

- 1/62 հորատանցքով - B կարգի՝ 5.0 լ/վրկ կամ 432.0 մ³/օր,
- 3/62 հորատանցքով - B կարգի՝ 7.12 լ/վրկ կամ 615.0 մ³/օր,
- 6/64 հորատանցքով - B կարգի՝ 7.02 լ/վրկ կամ 607.0մ³/օր:

Ազատ ածխաթթու գազի պաշարները՝

- 1/62 հորատանցքով - B կարգի՝ 5.1 գ/լ կամ 3.6 մ³/մ³,
- 3/62 հորատանցքով - B կարգի՝ 1.0 գ/լ կամ 0.7 մ³/մ³,
- 6/64 հորատանցքով - B կարգի՝ 0.3 գ/լ կամ 0.2 մ³/մ³:

Հանքային ջրերը կապված են Հրազդան գետի հին հովտի էֆֆուզիվ ալյուվիալ կոմպլեքսի հետ:

Հանքավայրի հիմնական ջրատար արդյունաբերական գոտին, որի հանքային ջրերը բավարարում են կոնդիցիայի պահանջներին, հայտնաբերվել են 46.0-80.0մ միջակայքում և

ներկայացված են խարամով, հրաբխային ավազով, ճեղքավորված պիրոկսենային անդեզիտաբազալտներով:

Արգնիի հանքային ջրերը ածխաթթվային են (CO_2 -97.0-99.8%), թույլ թթվային (pH -6.4-6.6): Ըստ քիմիական կազմի քլորիդ-հիդրոկարբոնատային, նատրիումային են՝ 5.4-14.5գ/լ հանքայնացումով և 16.4-21.0°C ջերմաստիճանով:

Լուծված CO_2 գազի պարունակությունը կազմում է 1.7-1.8գ/լ, իսկ ազատ CO_2 գազինը՝ 0.3-5.1գ/լ:

Սպեցիֆիկ միկրոկոմպոնենտների չնչին քանակը չի գերազանցում թույլատրելի սահմանները:

Հանքային ջրի մանրէաբանական կազմը բարվոք է:

Ջրի քիմիական անալիզները կատարվել են «Геоминвод», ЭПП «Армминводы» и ООО «Акфар» լաբորատորիաներում:

Հանքավայրի ջրերը կարելի է հաջողությամբ օգտագործել առողջարային բուժման ((հոր. 1/62 և 3/62) խրոնիկական գաստրիտի, ստամոքսի և 12 մատնյա աղիքի, խոցի և այլ), ինչպես նաև որպես սեղանի զովացուցիչ ջուր օգտագործելու համար (հոր. 6/64): Թիվ 1/62 հորատանցքի ջրից կարելի է կորզել ազատ ածխաթթու գազ:

Թիվ 1/62 հորատանցքը գտնվում է Հրազդան գետի կիրճի ձախ ափին, Արգնիի առողջարանի լոգարանի շենքից դեպի հյուսիս-արևելք 39.5մ հեռավորության վրա, իսկ թիվ 6/64 հորատանցքը գտնվում է Արգնիի առողջարանի տարածքում, թիվ 1/62 հորատանցքից 24.0 մ դեպի հյուսիս (տե՛ս իրավիճակային հատակագիծը):

Հորատանցքերի կոորդինատներն են՝

Հորատանցքի համարը	I. CK-42 կոորդինատների համակարգով		II. ARM WGS-84 կոորդինատների համակարգով		Հորատանցքի բացարձակ բարձրությունը, մ
1/62	X = 4464236	Y = 8465255	X = 4464229	Y = 8465153	1280.2
6/64	X = 4464260	Y = 8465250	X = 4464253	Y = 8465148	1280.0

Թիվ 1/62 հորատանցքի ջրի ծախսը կազմում է 5.0լ/վրկ, հանքայնացումը՝ 13.6-14.5գ/լ, ջերմաստիճանը՝ 20.0-21.0°C: Լուծված CO₂ գազի պարունակությունը կազմում է 1.6-2.0գ/լ, իսկ ազատ CO₂ գազինը՝ 5.0-5.2գ/լ: Ըստ քիմիական կազմի՝ քլորիդ-հիդրոկարբոնատային, նատրիումային է: Հորատանցքի հանքային ջրի հիմնական արդյունաբերական միջակայքը, որն համապատասխանում է կոնդիցիայի պայմաններին, տեղակայված է 48.0-80.0մ խորության վրա:

Թիվ 6/64 հորատանցքի ջրի ծախսը կազմում է 7.02լ/վրկ, հանքայնացումը՝ 5.4-6.5գ/լ, ջերմաստիճանը՝ 16.4°C: Լուծված CO₂ գազի պարունակությունը կազմում է 1.6-1.8գ/լ, իսկ ազատ CO₂ գազինը՝ 0.2-0.4գ/լ: Ըստ քիմիական կազմի՝ քլորիդ-հիդրոկարբոնատային, նատրիումային է: Հորատանցքի հանքային ջրի հիմնական արդյունաբերական միջակայքը, որն համապատասխանում է կոնդիցիայի պայմաններին, տեղակայված է 50.0-67.0մ խորության վրա:

Ընկերությունը ցանկանում է երկարաձգել Արզնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 1/62 և 6/64 հորատանցքերով հաշվարկված և հաստատված պաշարի հանքային ջրի արդյունահանման թույլտվության գործողության ժամկետը 20 տարով:

«Արզնի առողջարան» ՓԲ ընկերության պահանջվող հանքային ջրի ջրաքանակը մնում է անփոփոխ և կազմում է՝ 30000.0 մ³/տարի կամ 0.95 լ/վրկ (10000.0 մ³/տարի կամ 0.32լ/վրկ թիվ 1/62 հորատանցքից՝ բուժական նպատակով և 20000.0 մ³/տարի կամ 0.63լ/վրկ թիվ 6/64 հորատանցքից՝ ըմպելասրահի համար):

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Շրջակա միջավայրը մարդու բնակության և արտադրական գործունեության միջավայրն է, որը պահպանության և իր վրա ազդեցության գնահատման կարիքն ունի:

Շրջակա միջավայրի պահպանության հիմնական խնդիրներն են շրջակա միջավայրի բնական վիճակի պահպանումը, վերականգնումը, վնասազերծումը, բնական պաշարների խելամիտ օգտագործումը, շրջակա միջավայրի վրա ֆիզիկաքիմիական, կենսաբանական, մեխանիկական, ռադիոակտիվ և այլ վնասակար ազդեցությունների նվազեցումն ու կանխումը:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը շրջակա միջավայրի վրա բնածին, տեխնածին և մարդածին ներգործության էկոլոգիական հետևանքների վերլուծությունն է՝ շրջակա միջավայրի որակի պահպանման և բնակչության էկոլոգիական անվտանգության ապահովման նպատակով: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման դեպքում իրականացվում են մթնոլորտային օդ և մակերևութային ջրերի մեջ արտանետվող աղտոտող նյութերի քանակի և բաղադրության մշտական հաշվառում և չափումներ, մշակվում են դրանց կրճատման և կանխման միջոցառումներ: Շրջակա միջավայրի վիճակի գնահատման համար սահմանվում են աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաներ, սահմանային թույլատրելի արտանետումներ և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի նորմատիվներ:

Մարդն իր արտադրական գործունեությամբ մշտապես ազդում է շրջապատող բնության վրա: Այդ ազդեցության համատեքստում բնական միջավայրը՝ շնորհիվ մարդկանց գիտակից ու պատասխանատու վերաբերմունքի, կարող է բարելավվել (օր.՝ ծառատունկ, ռոտգում և այլն), դառնալ ավելի բարենպաստ մարդու կյանքի ու գործունեության համար, իսկ անպատասխանատու վերաբերմունքի դեպքում՝ խաթարվել, քայքայվել:

Մարդու աշխատանքային գործունեության հետևանքով շրջակա միջավայրը կարող է խաթարվել երկու դեպքում: Առաջին, երբ մարդը բնությունից կորզում է և օգտագործում է նրա տարրերը ոչ այն չափով, որքան կարելի է և ոչ այնտեղ, որտեղ կարելի է: Երկրորդ, երբ մարդը բնությանն է վերադարձնում արտադրական կամ կենցաղային այնպիսի թափոններ և այն քանակով, որ բնությունը չի կարողանում ինքնամաքրվել:

Երկու դեպքերում էլ տեղի է ունենում բնական միջավայրի էկոլոգիական հավասարակշռության խախտում և հասունանում է էկոլոգիական ճգնաժամը, ապա և աղետը:

Հանքային ջրի հանքավայրի արդյունավետ և երկարաժամկետ շահագործումը հնարավոր է իրականացնել միայն հորատանցքի լավ տեխնիկական վիճակի, նրանց գլխամասային սարքավորումների, չափիչ սարքերի, ինչպես նաև սանիտարական պահպանության գոտիների առկայության և պատշաճ վիճակում պահելու պայմաններում:

Հանքավայրի ջրհավաք թիվ 1/62 և 6/64 հորատանցքերի շահագործումը ընկերությունը մինչ օրս իրականացնում է և կշարունակի իրականացնել համաձայն ՀՀ կառավարության 5 հոկտեմբերի 2017 թվականի N 1267-Ն որոշմանը, որը կիրառվում է բնօգտագործման վճար վճարող ջրօգտագործողների կողմից ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանված պաշարների և արտադրված ածխաթթու գազի հաշվառման նպատակով ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքերի, գազաչափերի տեղադրման և կնքման, ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանված պաշարների և արտադրված ածխաթթու գազի ծավալների վերաբերյալ տվյալների արձանագրման կարգերը և ժամկետները սահմանելու ժամանակ:

Արգնիի ածխաթթվային հանքային ջրի շահագործման բազմամյա փորձը ցույց է տվել, որ արդյունահանման աշխատանքների ընթացքում որևիցե տեխնաժին ճնշումներ հանքավայրի շրջակայքի մթնոլորտի, հողային ծածկույթի, բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև լանդշաֆտային ամբողջականության վրա չեն դրսևորվել, քանի որ, հանքային ջրի արդյունահանման ընթացքում փոշու և վնասակար նյութերի արտանետումներ չի կատարվել, իսկ կենցաղային աղբը փաթեթավորվել և տեղափոխվել է մոտակա աղբավայրի կետեր: Ավելին, հանքավայրի շահագործումը չի ուղեկցվելու, օրինակ, աղմուկով, որը որևէ կերպ կարող է անհանգստացնել ազդակիր համայնքի բնակիչներին:

Արգնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի տարածքը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններում: Այստեղ չեն արձանագրվել նաև ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում նշված բուսական կամ կենդանական տեսակների աճելավայրեր և ապրելավայրեր: Հանքավայրի տարածքում նախնական

դիտարկումների արդյունքում չեն արձանագրվել կենդանիների և թռչունների բներ, ծածկույթներ: Հանքային ջրերի արդյունահանման աշխատանքների բացասական ազդեցությունը հանքավայրի տարածաշրջանի բուսական և կենդանական աշխարհի վրա գրոյական է:

Արգնի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրում բացակայում են սողանքային երևույթները, մոտակայքում կան անտառային ծածկույթներ, արդյունաբերական և տնտեսական շինություններ: Հանքավայրի տարածքում բնության, պատմության և մշակույթի հուշարձաններ հաշվառված չեն:

Ընկերությունն օգտվում է գոյություն ունեցող ավտոճանապարհից և ենթակառուցվածքներից՝ գազատար, ջրատար, էլեկտրահաղորդման գծեր և այլն

Հանքավայրի արդյունավետ շահագործման և արտադրության կազմակերպման համար ընկերությունը համալրված է բազմափորձ մասնագետներով:

Հանքային ջրերի հանքավայրերի շահագործման բազմամյա փորձը գալիս հավաստելու, որ ջրհավաք հորատանցքերի շահագործման ընթացքում ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, հաշվի առնելով աշխատանքների բնույթը, կլինի գրեթե գրոյական:

5. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

5.1. Ընդհանուր բնույթի միջոցառումներ

Մարդկային արտադրական գործունեությունը միաժամանակ լուրջ վտանգ կարող է սպառնալ շրջապատող միջավայրին, եթե այն իրականացվի առանց հաշվի առնելու ընդերքի, ջրային ռեսուրսների, շրջապատող միջավայրի պահպանության պայմանները:

Համաձայն ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի (հոդված 64)՝ ընդերք շահագործողները պարտավոր են ապահովել շրջակա միջավայրի պահպանության պայմաններն ու պահանջները, իրականացնելով հետևյալ միջոցառումները՝

- ☐ մթնոլորտի, ջրային ռեսուրսների, հողի, կենդանական և բուսական աշխարհի պաշտպանությունն ու պահպանումը,
- ☐ բնության հատուկ պահպանվող տարածքների ռեժիմի պահպանումը,
- ☐ ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողերի ռեկուլտիվացիայի, ծառատնկման, կանաչապատման աշխատանքների իրականացումը, մշակված հանքային տարածությունների վերականգնումը,
- ☐ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ենթարկված փաստաթղթերի պահանջների ու միջոցառումների կատարումը,
- ☐ շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված պայմանագրային պարտավորությունների կատարման ապահովումը և այլն:.

Ջրհավաք հորատանցքերի շահագործման աշխատանքները կիրականացվեն՝ հաշվի առնելով ընդերքի, ջրային ռեսուրսների, շրջակա միջավայրի և բնապահպանության ոլորտների ՀՀ օրենսդրության և իրավական այլ ակտերի պահանջները, որոնք ներառում են հետևյալ հիմնական միջոցառումները.

- ☐ պահպանել աշխատանքների կատարման համար հողահատկացման սահմանված կարգը,
- ☐ բնական պայմանների խախտման բացասական երևույթների վերացում,

- բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործում և շրջակա միջավայրի պահպանման համար առանցքային միջոցառումների ձեռնարկում,
- աշխատանքների վարման անվտանգ ձևերի ընտրություն և այլն:

Ստորերկրյա ջրերի (քաղցրահամ և հանքային) հանքավայրերի շահագործման երկարամյա փորձը գալիս է հավաստելու, որ դրանց պաշարների արդյունաբերական յուրացումն բացասական ազդեցություն չի թողնում շրջակա միջավայրի վրա:

Ինչպես նշել էինք, Արգնի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի տարածքը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններում: Այստեղ չեն արձանագրվել նաև ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում նշված բուսական կամ կենդանական տեսակների աճելավայրեր և ապրելավայրեր:

Աշխատանքների կատարման ընթացքում ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, հաշվի առնելով աշխատանքների բնույթը, կլիմայի աննշան և չի հանգեցնի էկոհամակարգերի վրա բացասական ճնշումների դրսևորմանը:

5.2. Շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված միջոցառումների ծրագիր

Ջրհավաք հորատանցքի արդյունավետ շահագործման հիմնական պահանջները հետևյալն են՝

1. Հանքային ջրի հանքավայրի արդյունավետ և երկարաժամկետ շահագործումը հնարավոր է իրականացնել միայն հորատանցքի լավ տեխնիկական վիճակի, նրանց գլխամասային սարքավորումների, չափիչ սարքերի, ինչպես նաև սանիտարական պահպանության առաջին խիստ ռեժիմի գոտիի առկայության և պատշաճ վիճակում պահելու պայմաններում:
2. Ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի արդյունաբերական շահագործումը պետք է իրականացնել հատուկ ջրհավաք (կապտաժային) հորատանցքից կահավորված

չժանգոտվող (խմելու որակի) խողովակաշարով: Շահագործման ժամանակ չի թույլատրվում շահագործվող ջրհավաք հորատանցքից ՊՊՀ-ի կողմից հաստատված պաշարների չափից ավելի արդյունահանումը:

3. Ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի հորատանցքի շահագործումը պետք է իրականացվի հիդրոերկրաբանական պայմաններին, հանքային ջրերի հաստատված պաշարների քանակին, նրանց քիմիական կազմին, ջերմաստիճանին և ռեժիմին խիստ համապատասխան:
4. Իրականացնել սիստեմատիկ հիդրոերկրաբանական ռեժիմային ստացիոնար մշտադիտարկումներ (մոնիտորինգ) ջրհավաք հորատանցքի շահագործման ռեժիմի և տեխնիկական վիճակի նկատմամբ: Ջրհավաք հորատանցքի շահագործումը և հանքային ջրի ռեժիմի հսկողությունն իր մեջ ներառում է հանքային ջրերի քանակի և որակի նկարագիրը, նրա երկարատև շահագործման պայմաններում, ինչպես նաև հորատանցքի պահպանումը՝ սպառումից, աղտոտումից և աղակալումից:
5. Հանքային ջրերի շահագործման ժամանակ անհրաժեշտ է ապահովել ջրերի կոնդիցիոն քիմիական կազմի պահպանումը:
6. Հակավթարային միջոցառումներ:
7. Նախատեսվում է հարակից տարածքները չխախտել և չաղտոտել կենցաղայի աղբով և այլ տեսակի թափոններով:
8. Նախատեսվում են սանիտարակենցաղային հարմարություններ՝ հանդերձարան, ցնցուղարան, զուգարան և հանգստի սենյակ՝ համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանի:
9. Նախատեսվում է առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի 438 որոշման 43-րդ կետի որոշման պահանջներով՝ մասնավորապես՝ <<Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմին: Լիազորված մարմինը կամ նրա մարզային

ծառայությունն ապահովում է հայտնաբերված պատմամշակութային արժեքների հետազոտումը և դրանց պատմական, գիտական, գեղարվեստական կամ այլ մշակութային նշանակության բացահայտումը, ինչպես նաև սահմանում է այն միջոցառումները, որոնք պետք է ապահովեն պատմամշակութային արժեքների պահպանությունը>>:

10. Նախատեսվում է ներառել արտակարգ իրավիճակների պատրաստվածության պլան, ինչը կներառի համապատասխան միջոցառումներ, մասնավորապես հնարավոր արտակարգ իրավիճակների առաջացման և գործողությունների, որոնք կնվազեցնեն կյանքի կորստի և ունեցվածքի վնասի վտանգը, ինչպես նաև արտակարգ իրավիճակների ռիսկը կանխելու կամ հնարավոր չափով նվազեցնելու գործողությունների ծրագիր, որն իր մեջ կներառի անբարենպաստ ժողովրդագրական պայմանների ժամանակ իրականացվող միջոցառումները և հրդեհային անվտանգությունը:

11. Նախատեսվում է նշանակել հրդեհային անվտանգության համար պատասխանատու անձ, ով ամբողջ տարածքում անց է կացնելու տեսչական ստուգում, որպես աշխատանքային պլանի մի մաս: Շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

12. Տրանսպորտային միջոցներին նախատեսվում է ապահովել հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկղիկով, իսկ աշխատանքների հետ անցկացնելու դրանց ճիշտ օգտագործման, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:

Ելնելով այն հանգամանքից, որ ընկերության կողմից շահագործվող հորատանցքերը արդեն իսկ կահավորված են ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան և խողովակաշարը գոյություն ունեցող է՝ կահավորված համապատասխան սարքավորումներով, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինման անհրաժեշտություն չկա, ուստի կարելի է փաստել, հանքարդյունահանման աշխատանքների ժամկետի

երկարաձգման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները մեղմելու կամ նվազեցնելու համար լրացուցիչ միջոցառումների նախատեսում չի պահանջվում

5.3. Հիդրոերկրաբանական մշտադիտարկումների (մոնիտորինգի)

իրականացման պլան

Հանքային ջրերի պաշարները վերականգնման առանձնահատկություն ունեն և շահագործման ընթացքում պահանջում են զուգահեռաբար իրականացնել ջրերի որակի, քանակի, վիճակի և շահագործման ռեժիմի նկատմամբ ուսումնասիրություններ, որը կապահովի զերծ պահել ջրերը աղտոտումից, սպառումից և տեխնաժին գործընթացների վնասակար ազդեցությունից:

Ստորերկրյա հանքային ջրերի հանքավայրերի շահագործման ժամանակ նախատեսվող և իրականացվող ռեժիմային դիտարկումների նպատակն է՝

- 1) հանքավայրի շահագործման ժամանակ հանքային ջրի քանակի և որակի կայունության պահպանումը.
- 2) հնարավոր սպառման և աղտոտման բացահայտումն ու նախազգուշացումը.
- 3) ստորերկրյա հանքային ջրերի բնական ու խախտված ռեժիմների և դրանց ձևավորման օրինաչափությունների ուսումնասիրությունը.
- 4) ստորերկրյա հանքային ջրերի ռեժիմի կարճաժամկետ ու երկարաժամկետ կանխատեսումների համար տվյալների հավաքագրումը և վերլուծությունը.
- 5) ստորերկրյա հանքային ջրերի աղտոտման և սպառման աստիճանի գնահատման մասին հենակետային տվյալների ստացումը.
- 6) ստորերկրյա հանքային ջրերի շահագործվող հանքավայրերում ջրի ծախսի, ճնշման կամ մակարդակի և ջերմաստիճանի չափումների, ինչպես նաև ֆիզիկաքիմիական անալիզների իրականացումը, ստորերկրյա ջրերի պաշարների վերագնահատման օպերատիվ տվյալների հավաքագրումը, մշակումը և ամփոփումը.
- 7) ամփոփ տվյալների հիման վրա առաջարկությունների մշակումը և ներկայացումը լիազոր մարմնին:

Ելնելով վերոհիշյալից, հանքավայրի թիվ 1/62 և 4/64 հորատանցքերում և առողջարանի տարածքում համաձայն ՀՀ կառավարության 22 նոյեմբերի 2012թ. N 1484-Ն և 22 փետրվարի 2018թ. N 191-Ն որոշումների հավելվածի, սահմանված կարգով, կիրականացվեն մշտադիտարկումներ (մոնիտորինգ)՝ ջրի և գազի ծախսի, ճնշման (մակարդակի) և ջերմաստիճանի չափումներ, ինչպես նաև կկատարվեն մթնոլորտային օդի և հողային ծածկույթի նմուշարկումներ՝ համապատասխան լաբորատոր հետազոտություններ իրականացնելու համար (տե՛ս մշտադիտարկումների պլանի կառուցվածքն ու բովանդակության աղյուսակը):

Մշտադիտարկումների պլանի կառուցվածքն ու բովանդակությունը:

Մշտադիտարկումների օբյեկտը	Մշտադիտարկումների վայրը	Ցուցանիշը	Մշտադիտարկումների տեսակը	Նվազագույն հաճախակա-նությունը
Հանքային ջուր	հանքավայրի առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտում ընդգրկված թիվ 1/62 և 6/64 հորատանցքեր	- ջրերի քիմիական կազմ, - մակարդակ, ջերմաստիճան, ջրի և գազի ծախս	- նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտու-թյուն, - չափումներ	- եռամսյակը մեկ անգամ - 10 օրը մեկ անգամ
Հողային ծածկույթ	հանքավայրի և առողջարանի տարածքում	- հողերի քիմիական կազմ, - հողերում նավթամթերքների պարունակությունը	- նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտու-թյուն	- տարեկան երկու անգամ
Մթնոլորտային օդ	առողջարանի տարածքում	-օդի աղտոտում փոշիով և արտանետումներով	- նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտու-թյուն	- տարեկան մեկ անգամ
Կենսաբազմա-անության ուսումնասիրու-թյուն	հանքավայրի տարածքում	տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն	հաշվառում, նկարագրություն, քարտեզագրում	- տարեկան մեկ անգամ

Ելնելով հանքավայրի հիդրոերկրաբանական պայմաններից և գործող մեթոդական ցուցումներից՝ ջրի ծախսի և գազի, ճնշման (մակարդակի) և ջերմաստիճանի չափումները կկատարվեն 10 օրը մեկ:

Ջրի նմուշները քիմիական լաբորատորիայում ենթարկվելու են կրճատ քիմիական անալիզի, որտեղ որոշվելու են – (Na+K), NH₄, Ca, Mg, Fe, Cl, SO₄, NO₂, NO₃, CO₃, HCO₃, SiO₂, H₂S, կոշտությունը, հանքայնացումը, չոր նստվածքը, թթվայնությունը, ջրի ֆիզիկական հատկությունները և այլն:

Ստացված արդյունքները հնարավորություն կնձեռնեն գնահատելու հանքավայրում տեղի ունեցող քանակական և որակական փոփոխությունները:

Արդյունքում կկազմվի հաշվետվություն, որը կներկայացվի «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ն հաշվառման և պահպանման:

Եթե հաստատված պաշարների և մոնիտորինգի արդյունքում ստացված տվյալների միջև նկատվի զգալի տարբերություն, ապա համաձայն ՀՀ կառավարության 22 նոյեմբերի 2012թ. 1480–Ն որոշման պահանջների, անհրաժեշտ կլինի վերագնահատել հանքային ջրի հանքավայրի պաշարները և ներկայացնել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ընդերքի վարչության ընդերքաբանական և փորձաքննության բաժին հաստատմանը:

:

5.4. Սանիտարական պահպանության գոտի

Հանքային ջրի հանքավայրի արդյունավետ և երկարաժամկետ շահագործումը հնարավոր է իրականացնել միայն հորատանցքի լավ տեխնիկական վիճակի, նրանց գլխամասային սարքավորումների, չափիչ սարքերի, ինչպես նաև սանիտարական պահպանության գոտիների առկայության և պատշաճ վիճակում պահելու պայմաններում:

Ածխաթթվային հանքային ջրերի հանքավայրի շահագործումը և հանքային ջրի ռեժիմի հսկողությունն իր մեջ պետք է ներառի հանքավայրի վիճակի նկարագիրը՝ հանքավայրի պաշտպանումն աղտոտումից, սպառումից:

Համաձայն Ընդերքի մասին օրենսգրքի հոդված 67-ի ստորերկրյա ջրերի հանքավայրերի շուրջը սահմանվում են սանիտարական պահպանության գոտիներ:

Արգնիի հանքային ջրերի հանքավայրի շահագործողական պաշարները սպառումից և աղտոտումից զերծ պահելու նպատակով ՀԽՍՀ մինիստրների խորհրդի 1983 թվականի փետրվարի 28-ի N 115 <Об утверждении границ округа и зон санитарной охраны курорта республиканского значения Арзни и плана санитарнооздоровительных мероприятий> որոշմամբ սահմանվել են հանքավայրի սանիտարական պահպանության գոտիները (տես Արգնի առողջարանի սանիտարական պահպանության գոտիների սխեմատիկ քարտեզը, մասշտաբ 1:100000):

Ելնելով այդ պահանջներից, երրորդ սանիտարական պահպանության գոտու սահմանագիծը կազմում է 90300.0 մետր, մակերեսը՝ 230.0կմ², իսկ երկրորդ (սահմանափակման գոտի) սանիտարական պահպանության գոտու սահմանագիծը կազմում է 13900.0 մետր, մակերեսը՝ 18.0կմ²:

Ածխաթթվային հանքային ջրի բարվոք մանրէաբանական կազմը, շրջապատող միջավայրը, հնարավոր աղտոտող օբյեկտների բացակայությունը սնման և բեռնաթափման մարզերում և ջրատար արդյունաբերական միջաքայքի խորը տեղադրված լինելը՝ բարենպաստ պայմաններ են ստեղծում երկրորդ (սահմանափակման գոտու) և երրորդ սանիտարական պահպանության գոտիների անտեսման և միայն առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտու կառուցման անհրաժեշտության մասին:

Վերջինս կոչված է հանքային ջրի ֆիզիկական և քիմիական հատկությունների պահպանման, հորատանցքի ելքը հնարավոր աղտոտումից պահպանելու համար:

Առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտու սահմանը պաշտպանված ստորերկրյա ջրերի օգտագործման դեպքում ըստ գործող հրահանգի սահմանվում է ջրհավաք հորատանցքից ոչ պակաս 30.0մ հեռավորության վրա:

Առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտին ընդգրկում է բոլոր այն հորատանցքերը, որոնցով հաշվարկվել և հաստատվել են հանքավայրի շահագործողական պաշարները:

Առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտու տարածքը անմիջապես հորատանցքերի մոտ պլանավորված է այնպես, որպեսզի հնարավոր լինի մակերևութային աղտոտված ջրերը հեռացնել հորատանցքերի սահմաններից դուրս: Գոտին պարսպատված է մետաղական ցանկապատով և ապահովված է պահպանությունով:

Ջրհավաք բոլոր երեք հորատանցքերը (1/62, 3/62, 6/64), որոնցով հաշվարկվել և հաստատվել են հանքավայրի շահագործողական պաշարները, իրենց գլխամասային սարքավորումներով ներառվել են 1983 թվականին կառուցված սանիտարական պահպանության առաջին (խիստ ռեժիմի) գոտիում, որի սահմանագիծը կազմում է 1278.0 մետր, իսկ մակերեսը՝ 28600.0մ²:

Ջրհավաք հորատանցքերը կահավորված են վերերկրյա կառույցով: Իրականացվել է հորատանցքերի բերանի շուրջ ֆունդամենտի հուսալի հիդրոիզոլյացիա, որը բացառում է մակերևութային աղտոտված ջրերի մուտքը դեպի հորատանցք:

Մակերևութային աղտոտված ջրերը՝ տվյալ դեպքում միայն անձրևաջրերն են, այլ աղտոտված ջրեր գործունեության իրականացումից չեն առաջանում, որոշ մասը ներծծվում են հողային ապարներում, մյուս մասն էլ ինքնահոս կերպով լցվում են Հրազդան գետի մեջ:

Հանքավայրի սանիտարական պահպանության գոտու սահմաններում պետք է պահպանվի ռեժիմ, որը կապահովի բարձր սանիտարա-հիգիենիկ պայմաններ և կպաշտպանի հանքային ջրերի հանքավայրը աղտոտումից և սպառումից:

Հատուկ ուշադրություն պետք է արվի հանքային ջրի ջրհավաք հորատանցքի պահպանմանը:

Առաջին սանիտարական պահպանության գոտու տարածքում արգելվում են բոլոր տեսակի շինարարական աշխատանքներ, որոնք չունեն անմիջական կապ հորատանցքի շահագործման, վեռակառուցման/վերանորոգման և սպասարկման հետ:

Ընդերքօգտագործողը սանիտարական պահպանության գոտու սահմաններում ունի գործունեության բացառիկ իրավունք: Կողմնակի մարդկանց մուտքը, որոնք կապ չունեն հանքավայրի հորատանցքի շահագործման և պահպանության հետ արգելվում է:

Արգելվում է յուրաքանչյուր գործունեություն այլ անձի կողմից: Այն կարող է իրականացվել միայն ընդերքօգտագործողի համաձայնությամբ:

6. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Արգնի առողջարանը դեռևս ԽՍՀՄ տարիներին այն միութենական նշանակության հանգստավայր էր, ուր բուժման նպատակով այցելում էին ամենատարբեր երկրներից:

«Արգնի առողջարան» ՓԲ ընկերությունը ցանկանում է երկարաձգել Արգնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 1/62 և 6/64 հորատանցքերով հաշվարկված և հաստատված պաշարի հանքային ջրի արդյունահանման թույլտվության գործողության ժամկետը 20 տարով:

Ընկերության պահանջվող հանքային ջրի ջրաքանակը կազմում է՝ 30000.0 մ³/տարի կամ 0.95 լ/վրկ (10000.0 մ³/տարի կամ 0.32 լ/վրկ թիվ 1/62 հորատանցքից՝ բուժական նպատակով և 20000.0 մ³/տարի կամ 0.63 լ/վրկ թիվ 6/64 հորատանցքից՝ ըմպելասրահի համար):

«Արգնի առողջարան» ՓԲ ընկերությունը մարդկանց համալիր բուժման գործընթացը իրականացրել է և կշարունակի իրականացնել ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող տարածքում կառուցված առողջարանային համալիրի 1-ին և 2-րդ մասնաշենքերում, որոնց մակերեսները համապատասխանաբար կազմում են՝ 3875.3մ² և 3496.8մ²: Այն գտնվում է թիվ 1/62 և 6/64 հորատանցքերից մոտ 640.0 մ հեռավորության վրա:

«Արգնի առողջարան» հանգստավայրը բուժման և հանգստի կազմակերպման համար անհրաժեշտ պայմաններով հագեցած մի ամբողջական համալիր է: Այն գտնվում է ծովի մակերևույթից 1250 մ բարձրության վրա, Երևանից 23 կմ դեպի հյուսիս:

2008թ.-ին սեփականատիրոջ կողմից կատարվեցին ծրագրային խոշոր ներդրումներ: Կառուցվեց «Արգնի առողջարան» հանգստավայրի 2-րդ մասնաշենքը:

2013-2014թ.թ. հիմնովին վերանորոգվեց՝ հանգստավայրի բուժման 1-ին մասնաշենքը, կաթսայատունը, կառուցվեցին՝ հանքային ջրի ըմպելասրահը, բաց լողավազանը, կեղտաջրերի մաքրման կայանը, տեղադրվեց՝ արևային էներգիայի կայան 100.0 կվտ հզորությամբ (տես «ԱՐՋՆԻ ԱՌՈՂՋԱՐԱՆ» ՓԲԸ սխեման):

Արդյունքում, ներկա ժամանակահատվածում ընկերությունը բուժման և հանգստի գործընթացը կազմակերպելու համար ունի լուսավոր, հարմարավետ, միջազգային պահանջներին համապատասխան երկու մասնաշենք կահավորված ժամանակակից բուժական սարքավորումներով, տեխնիկայի վերջի խոսքով կահավորված համապատասխան աշխատասենյակներ, ննջասենյակներ, աշխատողների ու հանգստացողների սննդի և հանգստի կազմակերպման կառույցներ և խաղեր (փակ լողավազան, մանկական խաղասրահ, բիլիարդ, սեղանի թենիս, շախմատ և այլ):

«Արզնի առողջարան» ՓԲ ընկերության կողմից վերոհիշյալ աշխատանքների կատարման համար՝ ներդրվել է մոտ 4.3 մլն. ամերիկյան դոլար:

Հանքային ջրի հանքավայրի արդյունավետ շահագործման, բուժման և հանգստի գործընթացը կազմակերպման համար ընկերությունը համալրված է բազմափորձ մասնագետներով՝ բժիշկներ, բուժկույրեր, ադմինիստրատիվ և սպասարկող անձնակազմով:

Համալիրում օրական բուժում է ստանում միջինը մոտ 200 մարդ:

«Արզնի առողջարան» համալիրում բուժում են աղե-ստամոքսային տրակտի քրոնիկական հիվանդություններ, հենաշարժիչ ապարատի հիվանդություններ, նյութափոխանակության խանգարումներ, կանանց սեռական օրգանների քրոնիկական բորբոքային հիվանդություններ, ներոզներ, գերհոգնածություն և այլ հիվանդություններ:

Տեղի կլիմայական պայմաններն իդեալական են սիրտ-անոթային խնդիրներ ունեցող մարդկանց համար: Այն միակն է տարածաշրջանում և նախկին ԽՍՀՄ-ում սրտի իշեմիկ հիվանդության (ՄԻՀ) բուժման, հետինֆարկտային և հետինսուլտային վերականգնման համար:

Առողջարանում գործում են՝ հանքային ջրով լողանքներ (6 հատ վաննա 250.0 լիտր տարողությամբ), ջրաբուժություն, բուժական ֆիզկուլտուրա և մերսում, ֆիզիոթերապիա,

ինհալացիա և թթվածնային կոկտեյլ, բուժում պարաֆինով, տորֆով և կավով (2 հատ վաննա 350.0 լիտր տաքոդությամբ), տգրուկներով, ասեղներով և NUGA BEST սարքով:

«Արզնի առողջարան» ՓԲԸ համար հանքային ջուրը հանքավայրի թիվ 1/62 հորատանցքից գետնի տակով 2 դյույմանոց տրամագծի պլաստմասյա (խմելու որակի) խողովակի միջոցով տեխափոխվում է առողջարանային համալիրի 1-ին մասնաշենք, որտեղ ընկերությունը կազմակերպում և իրականացնում է այցելուների բուժման և հանգստի գործընթացը:

Ընկերությունն օգտվել և շարունակելու է օգտվել գոյություն ունեցող ավտոճանապարհից և ենթակառուցվածքներից՝ գազատար, ջրատար, էլեկտրահաղորդման գծեր և կոյուղագծեր, այլ օժանդակ շինություններ չեն նախատեսվում:

Ընկերությունը երկարաձգելով հանքավայրի թիվ 1/62 և 6/643 հորատանցքերի արդյունահանման իրավունքն և իրականացնելով այն կշարունակի ապահովել բուժման կարիք ունեցողների ավելացող պահանջարկը, կպահպանի գոյություն ունեցող աշխատատեղերը՝ նպաստելով Արզնի համայնքի բնակչության սոցիալական պայմանների և կենսամակարդակի բարելավմանը:

Բացի դրանից, ընկերությունը պատրաստ է յուրաքանչյուր տարի աջակցություն ցուցաբերել համայնքի կարիքների բավարարման համար:

К о п и я

Министерство здравоохранения СССР
Центральный научно-исследовательский институт курортологии
и физиотерапии
Москва, Кутузовский пр. 4

тел. _____

2390

18 ноября 1966 г.

С П Р А В К А

о кондициях на Арзнинские минеральные воды Армянской
ССР
/составлена по материалам Центральной гидрогеологи-
ческой экспедиции конторы "Геоминвод", 1966 г./

Арзнинские минеральные воды, выведенные тремя каптажными скважинами /№№ 1/62, 3/62 и 6/64/ из горизонтов четвертичных андезито-базальтовых вод лав и валунно-галечниковых отложений, являются углекислыми /содержание растворенной CO_2 от 1.8 до 2.1 г/л/, гидрокарбонатно-хлоридными натриевыми / Cl - 64-67, HCO_3 - 25-28, Na - 68-72 экв.%, кремнистыми / H_2SiO_3 - 97-138 мг/л/ с повышенным содержанием магния / Mg - 15-18 экв.%, слабо-кислыми / pH - 6.4 - 6.6/, холодными /16-20°C/ водами.

По общей минерализации Арзнинские воды разделяются на три группы: с минерализацией 3.9 - 4.1 г/л, 5.1 - 5.4 г/л и 12.1 - 12.6 г/л, отличающиеся также различным содержанием H_2SiO_3 и общей газонасыщенностью /от 1.2 до 4.5 г/л/, что объясняется процессами разбавления основных углекислых минеральных вод пресными водами.

Арзнинские воды могут быть использованы в виде ванн /преимущественно воды скважины № 1/62 и 3/62 - с большей минерализацией и содержанием углекислоты/, для питьевого лечения /воды всех скважин/ и для розлива в бутылки /вода скважины № 6/64/.

Остающийся от лечебных целей и розлива в бутылки дебит вод может быть использован для извлечения углекислого газа в промышленных целях.

п/п: директор института
Руководитель отдела изучения
курортных ресурсов
Руководитель гидрогеологического
отделения

/Ю.Е.Данилов/

/Г.А.Невраев/

/В.В.Иванов/

ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ
ՀՀ Կոտայքի մարզի Արզնի ածխաթվային հանքային ջրի
հանքավայրի թիվ 1/62 և 6/64 հորատանցքերի
 (հատված K-38-126-B, K-38-138-A թերթերից)
 Մասշտաբ 1:50000

Թիվ 1/62 հորատանցքի կոորդինատներն են՝
 I. CK-42 կոորդինատային համակարգով.
 X = 4464236 Y = 8465255
 I. ARM WGS - 84 կոորդինատային համակարգով.
 X = 4464229 Y = 8465153

Հորատանցքի բացարձակ բարձրությունը՝ 1280.2մ

Թիվ 6/64 հորատանցքի կոորդինատներն են՝
 I. CK-42 կոորդինատային համակարգով.
 X = 4464260 Y = 8465250
 I. ARM WGS - 84 կոորդինատային համակարգով.
 X = 4464253 Y = 8465148

Հորատանցքի բացարձակ բարձրությունը՝ 1280.0մ



«Արզնի Առողջարան» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն՝



Ա. Մահտեսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Կադաստրի
կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 28 փետրվարի 2020 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ԱՐՁՆԻ» ԱՌՈՂՋԱՐԱՆ ՓԲԸ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Կոտայք, համայնք Նոր Գեղի Առողջարանային փողոց 4-րդ փակուղի թիվ 1 առողջարան

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Հ.Ս.Մ.Ս. 14/05/2005թ. N208 որոշում, Մասնավորեցման պայմանագիր 26/12/2002թ. Ս/Մ 5043, Տեղեկանքներ 29/10/2001թ. N 026, 17/12/2012թ. N2/20, Իրավաբանական անձի պետական գրանցման վկայական 03-Ա-057273 տրված 21.10.2002թ., Շինարարության ավարտական ակտ, Ճարտարապետաշինարարական նախագիծ, Ճարտարապետահատակագծային առաջադրանք 02.10.2018թ. թիվ 16, Շինարարության թույլտվություն 19.10.2018թ. թիվ 17, Ավարտական ակտ 10.09.2019թ. թիվ 4, Համայնքի ղեկավարի 30/01/2020թ. թիվ 25 որոշում

ՎԿԱՅԱԿԱՆ N 28022020-07-0071, գաղտնաբառ՝ AY4GJBVCQLG4

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի
www.e-cadastre.am կայքէջի միջոցով

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 07-048-0451-0004

Մակերեսի չափը (հա)՝ 1.4

Նպատակային նշանակությունը՝ հատուկ պահպանվող տարածքների

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Առողջարարական նպատակներով նախատեսված

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ հասարակական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ
1	07-048-0451-0004-001	Առողջարան	3875.3 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
2	07-048-0451-0004-002	Պահեստ	48.9 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
3	07-048-0451-0004-003	Ցախանոց	88.6 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
4	07-048-0451-0004-004	Կաթսայատուն	335.2 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
5	07-048-0451-0004-005	Լվացքատուն	162.9 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
6	07-048-0451-0004-006	Ավտոտնակ	102 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
7	07-048-0451-0004-007	Ենթակայան	28.2 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
8	07-048-0451-0004-008	Ջրավազան	76.9 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
9	07-048-0451-0004-009	Մասնաշենք	3496.8 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
10	07-048-0451-0004-011	Օժանդակ շինություն	146.1 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
11	07-048-0451-0004-012	Կաթսայատուն	24.9 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
12	07-048-0451-0004-010	Ծածկ	14 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցված է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի պահանջների համաձայն պայմանով՝ գույքի հետագա օտարման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումը կկատարվի վճարման պահին գործող հողամասի կադաստրային արժեքի վճարման անդորրագիրը ներկայացվելու դեպքում:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Արել Բակլաջյան

ՎԿԱՅԱԿԱՆ N 28022020-07-0071, գաղտնաբառ՝ AY4GJBVCQLG4

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի
www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման
անշարժ գույքի ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 28022020-07-0071, գաղտնաբառ՝ AY4GJBVCQLG4

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի
www.e-cadastre.am կայքէջի միջոցով


Էջ 3/3

Կադաստրի
կոմիտե

«Արզնի արողջարան» ՓԲԸ-ի

ՍԽԵՄԱ

Մասշտաբ 1 : 1 000



1. 1-ին մասնաշենք
2. II-րդ մասնաշենք
3. III-րդ կաթսայատուն
4. Հիմնական կաթսայատուն
5. «Նոր Արզնի» Հանրային ջրի արտադրամաս
6. Էլեկտրական ենթակայան
7. Ընդլվարահ
8. Արևային էներգիայի ենթակայան
9. Կեղտաջրերի մաքրման կայան
10. Հրազդան գետ

